Հ. Ս. Խ. Հ.
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ.

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐԻՑ

I

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑՑ-ՆԱՄԱԿՆԵՐԸ.

ԱԼ. ՄԱՐՏՈՒՆՈՒ
ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ԳԻՆՆ Է 1,500,000 Հ. Խ. ԴՐ.

ԵՐԵՎԱՆ
Տպարան Իսազմ. ժող. Կոմիսարիատ.
1922

Հրատարակութիւն Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի:

329.14(47+9,25)
Г-19

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Այս գրքույկով հրապարակում ենք Հայաստանի նախկին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրության մի քանի դոկումենտներ, որ բավական բնորոշ են ու արժեքավոր ընկած կառավարության (և կուսակցության) իսկական դեմքը պարզելու համար։ Մեզ ժառանգություն մնացած արտ. գործ. մինիստրության արխիվում կան ուրիշ դոկումենտներ ևս, որոնք գալիս են առատ լույս սփռելու հայ-վրացական, հայ-ադրբեջանական և հայ-ռուսական հարաբերությունների, նրանց ներքին իրադարձությունների և ճշմարիտ բնույթագծի վրա, որոնցով իսկապես ղեկավարվելիս է եղել Դաշնակցությունը։ Բացի այդ գտնվում են նաև ուրիշ դոկումենտներ, որոնք վերաբերում են «հայկական հարցի» վերջին փուլերին (Եվրոպայում), այլ և մերկացնում են Ահարոնեանի պատվիրակության աշխատանքների ներքին մանրամասնությունները։ Այս բոլորը մինչև այսոր էլ գաղտնի է պահված հայ ժողովրդից և անգամ Դաշնակցության ամենալայն շարքերից։ Մենք մտահոգված ենք մոտիկ ապագայում այդ դոկումենտներից ևս հաջորդաբար լույս աշխարհ հանել։

Արտաքին Գործերի Ժողովրդական
Կոմիսարիաս.

10-ն մայիսի 1922 թ.
Երևան։



ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

Հետաքրքիր մարդիկ են դաշնակցականները. մարդիկ՝ զարմանալի հոգեբանությամբ, վոր ընդրոշում է նրանց վորպես քաղաքական արկածախնդիրների։ Նրանք միևնույն ժամանակ զանազան կերպ են խոսում, նրանցից մեկն անում է այն, միւսը հերքում է, ցույց են տալիս վորոշ գործունեություն և հետո հրաժարվում նրանից։

Այդպես և այդ մարդկանց էությունը։ Սակայն բարեբախտաբար նրանք թողել են մեզ ի ժառանգություն մի շարք փաստաթղթեր, վոր հերքելը այնքան էլ հեշտ չե, թեև նրանցից մեկը՝ Վրացեան ազգանունով, մի ժամանակ փորձեց հերքել հենց իր գրած նամակները Խորհրդային Հայաստանում գործող կոմունիստների հասցեով՝ մի օր խնդրելով նրանց իր ընտանեկան գործերը դրստել, իսկ միւս օր տերբորի սպառնալիք կարդալով։ Ինչ և իցե։ Սակայն ցանկացողները միշտ էլ կարող են տեսնել մեր արխիվներում նրանց գրությունների իսկականը, գրությունների, վոր կպահվեն ու կպահպանվեն ապագա սերունդների համար։ Բերենք նրանցից մի քանի նմուշներ։

Փաստաթղթերը վերաբերում են 1919 և 1920 թվականներին. նրանք անում են դաշնակցության եվրոպական (Ահարոնեանի) ու հայ ազգային (Նուբար փաշայի) պատվիրակությունների պատմությունը և ցույց են տալիս, թե ինչ կերպ են նայում եվրոպական բուրժուաները հայկական դատ կոչվածին։ Ահարոնեանի Փարիզից Երևան հղած նամակներն այս տեսակետից հարցի վրա խոշոր լույս են սփռում։ Նրանք պարզ կերպով պատկերացնում են դաշնակցականների դիպլոմատիայի վոգի աստառը։ Մարդիկ շարունակ երազել են, դիմել, խնդրել ու լիզել բուրժուաների վոտները՝ առանց լրջորեն մտածելու այն մասին, թե վորն և խնդրի լուծման հարազատ զսպանակը։ Ճիշտ է, առժամանակ նրանք, կարծես, ուշքի են գալիս և սկսում են հաշիվներ անել, ելնել պետությունների շահերից, տնտեսական ու քաղաքական շահախնդրությունից, բայց ամենևին չկարողանալով այդ ուղին մինչև վերջը տանել, խտացնել և ըստ այն նայել հարցին, նորից ու նորից ընկնելով հայկական ռոմանտիզմի, քաղաքական ավանտյուրիզմի և հասարակական մանկամտության գիրկը։

Ահա Ահարոնեանի և իրայինների կարծիքը զանազան պետությունների բռնած դիրքի մասին՝ հանդեպ «ժողովրդական» կամ «միջերկրական», ինչպես նրանք են ասում, Հայաստանի։

Ամերիկա։ Սա «ամենալավ երկիրն» է, վորովհետև Վիլսոնն ու նրա

կուսակցութիւնը՝ դեմոկրատները, ինչպես էլ լինի «լուծելու» են հայկական հարցը։ «Ամերիկան կտա զորք», նա «կտա մթերքներ», նա «կվերցնի Հայաստանի մանդատը», այսինքն՝ կհովանավորի Հայաստանը։ Ինչո՞ւ և ինչ հիման վրա—դա հայտնի չէ, բայց փաստը մնում է փաստ, որ բացի թշնամանքից, ամերիկական պաշտոնական եանքիները վոչինչ չտվին հայ ժողովրդին։

Անգլիան, հինավուրց «հայասեր» Ալբիոնը։ Դաշնակները մերթ աղերսում են նրան, մերթ մեղադրում, մերթ հայհոյում են և մերթ ցասում արտահայտում։ Անգլիան, իհարկե, պիտի պաշտպանե «քրիստոնեա— հային», այսպես է մտածում դաշնակցականը։ Բայց արի տես որ Կովկասում գործող անգլիական գեներալ Տոմսոնը գնում է հայերի դեմ, որի արարքները անգլիական արտաքին գործոց մինիստրն արդարացնում է։ «Անգլիական հրամանատարութիւնը մեզ հրամեցնելով (Օլթի-Արդահան, Ա. Մ.) այն ժամանակ, երբ եռանդով խլում եր մեզանից մեր Ղարաբաղը, պարզապես մեզ համար դավ է պատրաստել, որ ահա տալիս է իր պտուղները»։ Այսպես է գրում Ահարոնեան իր 1919 թ. օգոստ. 6 նամակում։ Նույն թվականի մարտ 6-ին դաշնակցական Հայաստանի արտաքին գործոց նախարարը հայտարարում է, որ անգլիական գեներալ Ֆորեստիլ-Ուսկկերի հրամանով հայերը պարպել են Ղարսը, որ կապիտան Լոտենի պատվերով հարավում առաջ գնացող հայ զորքերը քաշվում են Դավալուից էլ դեպի հիւսիս, որ Ղարաբաղն ու այլ վայրերն անգլիացիք հանձնում են մուսուլմաններին, և նա բացականչում է՝ «այսպիսով Անդրկովկասի թիւրքութիւնը բրիտանական զորահրամանատարութեան օրով ավելի նպաստավոր պայմանների մեջ է գտնվում, քան Գերմանո-Օսմանեան հաղթական օկուպացիայի օրով»։ 1919 թվի հուլիս 30-ից գրված նամակում Ահարոնեանը գտնում է. «Անգլեան ինչպես ամեն տեղ և մեզ մոտ վարում է քողարկված, բայց սիստեմատիկ մուսուլման քաղաքականութիւն»։

Մարդիկ միայն դառն փորձերից հետո, կարծես, սկսում են ըմբռնել, որ Մերձավոր Արևելքում բուրժուական Անգլիան հետևել է, հետևում է և պիտի հետևի մի նպատակ, այնպես վարվել Տաճկաստանի հետ, որ չվնասվի Անգլիայի, որպես ամենախոշոր մուսուլման երկրի, պրեստիժը, այլապես նա կկորչի որպես հզոր եվրոպական երկրի ծանրաբեռնված բազմաթիվ լայնածավալ մուսուլմանաբնակ գաղութներով։ Եթե Տաճկաստանն իրերի բերմամբ չի ջնջվելու երկրագնդի քարտեզից, ապա պետք է մի կերպ նրա հետ եոլա գնալ, ինչ վերաբերում է հայերին, դրանք մի չնչին, արհամարելի միավոր են։ Ինչ Հայաստան, ինչ պաշտպանութիւն հայ գաղթականութեան և այլն, որոնք դատարկ հնչուններ են կապիտալիստական Անգլիայի համար։ Այս չեն հասկանում Ահարոնեանները, նրանք ժամանակ առ ժամանակ միայն նկատում են այս. առանց քննելու, առանց գունեղ եզրակացութիւններ անելու։ Դրա մասին նրանք խոսում են, ինչպես տե-

սանք, շատ զգույշ տոնով, երբ Տոմսոնը հրամայում է հայ զորքերին հետ քաշվել, երբ անգլիացիք Թիֆլիզում Ահարոնեանին թույլ չեն տալիս Եվրոպա անցնել մինչև վոր հայերը վրացիների հետ իրենց վեճը չվերջացնեն, երբ անգլիական ներկայացուցիչը Հայաստան գնալիս, Պարիզում ինքն այցելելով վրաց և Ադրբեջանի ներկայացուցիչներին, մինչդեռ, կանչում է «իր մոտ Հայաստանի Հանրապետութեան» պատվիրակ Ահարոնեանին. վերջինս դանդատվում է, վոր անգլիական ներկայացուցիչ Վարտրոպն իր հետ այդպես է վարվել։ Բայց չնայած դրան, դաշնակցականներն իրենց թողած դոկումենտներում երազում են ունենալ Անգլիայի հսկողութիւնը հայ զորքերի վրա։

Ֆրանսիա։ Օա մտահոգված է Կիլիկիայի բաղդով, չի ուզում այն թողնել Հայաստանին, վերցնում է իրեն. այդպիսով «ամբողջական» Հայաստանը հոդս է ցնդում։ Ահարոնեան և ընկերները անրավական են, համարում են Ֆրանսիան եսասեր, վոսկեպաշտ. սակայն չնայած դրան, էլի դիմում են Ֆրանսիային, նրա մայրաքաղաքում «գործում» են հանուն «անկախ, միացեալ և այլն» Հայաստանի։

Իտալիան, ինչպես Ահարոնեանն է ասում, քարշ է գալիս Ֆրանսիայի հետևից։ Միւս պետութիւնները վոչինչ չեն անում։ Այդպես է հայկական հարցի դրութիւնը։ Իսկ ընդհանուր գնահատութիւնը ինչպե՞ս է։ Ահարոնեանը 1919 թ. հուլիս 31-ին Խատիսեանին գրում է. «Ժողովրդների քաղաքական բախտը էապես կախված է Պարիզի խաղաղութեան կոնգրեսից և վոչ թե մեր սեփական ցանկութիւնից և վորոշումներից»։ Նույն մարդը արդեն 1920 թ. հունվար 21-ին արձանագրում է, «ազգերի լիգան վորպես իրավական գործոն, դրեթե կորցրել է իր արժեքը. վոչոք այլևս նրանից չի սպասում ազգերի հաշտարար հարաբերութեան ապահովումը»։ Ահարոնեանը, 1919 թ. ամրանը վախ է հայտնում, վոր անգլիացիք իրենց զորքերը քաշում են Հայաստանից, իսկ նույն թվականի օգոստոս 9-ին նա գտնում է, վոր տեղական ժողովուրդներն իրենց բախտն իրենք պիտի վորոշեն, քանի վոր Եվրոպան միայն հրդեհներ է առաջ բերում և «աշխարհի բախտը այսոր ավելի շփոթ է, ավելի անհաստատ, քան պատերազմից առաջ»։ Այդ հակասութիւնների շարանը շատ երկար է։ Մի խոսքով եվրոպական լուծի տակ գտնվող դաշնակցականներն այլ կերպ չեին էլ կարող վարվել։

Անկախ Հայաստան։ Սրա մասին շատ է խոսված։ «Հայաստանը դաշնակների օրով անկախ է եղել, իսկ այժմ վոչ»։ Վերջերս կոմունիստները նույնիսկ ծախեցին հայերին, վրացիներին ու մուսուլմաններին—դաշնակցական գործիչներն այսպես գրեցին մեր Ֆեդերացիայի դեմ։ Իսկ կարդացեք դաշնակցականների փաստաթղթերը։

Վերևում մենք արդեն տեսանք, թե ինչ դեր եին կատարում անգլիական օֆիցերները դաշնակցական Հայաստանում։ Նրանք երկրի լիակատար խազեիններն են եղել։ Ղարաբաղի և Թուրքերի հետ ունեցած հարաբերու-

թիւնների հարցերում դաշնակցականներն առանց անգլիացիների վոչ մի քայլ չեն արել. Ահարոնեանն իր նամակներում բազմիցս գրում է այն մասին, թե պետք է խնդրել, թույլտվություն վերցնել Անգլիայից, Ամերիկայից այս ու այն քայլն անելիս երկրի ներսում. ել չենք խոսում երկրից դուրս։ Նույնիսկ մի այսպիսի փոքրիկ օրինակ։ Հայաստանում մինչև այժմ էլ գործող ամերիկեան Մերձ Արևելեան օգնութեան կոմիտեի ներկայացուցիչները սովորաբար հրամայելիս են եղել դաշնակցական պրեմիերներին ու մինիստրներին, առանց քաշվելու միշտ էլ նրանց կոպտաբար կանչելիս են եղել իրանց մոտ. իսկ հիմա, թող տեսնեն դաշնակցականները. թե ինչպես են պահում Խորհրդային կառավարութեան հանդեպ նույն մարդիկ այսորվա Հայաստանում։ Առաջ եղել է մի կողմից ամբարտավանութիւն, միւս կողմից լաքեյութիւն։ Իսկ այժմ մի կողմից պարկեշտութիւն, միւս կողմից արժանապատվութեան զգացում։

Անկախ Հայաստան . . . կարդացեք դաշնակցական կառավարութեան կողմից համաձայնական պետութիւնների մոտ ուղարկված պատվիրակութեանը տրված հրահանգը։ Այդ հրահանգի երրորդ կետն ասում է. «Հայաստանն ունենալու է ներքին ինքնավարութիւն և ինքնորոշում»։ Հինգերորդ կետ, «Հայաստանի անկախութեան ապահովումը պետք է վորոնել մի կամ մի քանի պետութիւնների դիվանագիտական և ռազմական պաշտպանութեան մեջ», վեցերորդ կետ, «Հայաստանը կարող է կապվել հարևան պետութիւնների հետ դաշնակցական կապերով»։ Այնուհետև իր 1919 թ. օգոստոս 8-ից նամակն Ահարոնեան այսպես է սկսում, «երեք օրից ի վեր ծեծում եմ բոլոր դռները»։ Նա ծեծում է եվրոպական բոլոր բուրժուաների դռները:

Այսպես են գրել, այս են արել մարդիկ, և սրանից հետո հոխորտում են անկախութեան մասին, դուրս են գալիս Ֆեդերացիայի դեմ, սա ինչ է՝ հիմարութիւն, թե շանտաժ։

Մի երկու խոսք էլ դաշնակցական Հայաստանի իր հարևանների հետ ունեցած հարաբերութիւնների մասին։ Այստեղ թրքատեացութիւնը չափ ու սահման չունի։ 1919 թ. հուլիս 28-ին Ահարոնեանն արձանագրում է իր Անտանտայի պատասխանը Տաճկաստանին, վորտեղ ի միջի այլոց ասված է. «Հայերի կոտորածի մեջ հավասարապես պատասխանատու են և թիւրք կառավարութիւնը և թիւրք ժողովուրդը»։ Հեղինակը սա անվանում է «սրտապարար», և «ամենավսեմ» և «աքանչելի. դատավճիռ»։ Նույն Ահարոնեանը 1920 թ. օգոստոս 10-ին աշխարհի բոլոր հափշտակիչների և կատաղի կեղեքիչների հետ միասին ստորագրեց Սեվրի խայտառակ դաշնագիրը, վոր իմպերիալիստական պատերազմի ամենամութալի հիշատակներից մեկն է մնալու։ Նույն ժամանակներում դաշնակցականները ծրագրում էին հարձակվել Թուրքերի վրա և գրավել նրանց հողամասերը մինչև Միջերկրական ծով, այնուհետև հայտնի են նրանց կռիվները Հայաստանի սահմաններից

դուրս և երկրի ներսում, կռիվներ սահմանները լայնացնելու և ներսում մուսուլման տարրերը «մաքրելու» նպատակով։ Սա նացիոնալիզմի և գաղտնային շովինիզմի ամենաբարձր աստիճանն է եղել։ Եվ այդ մարդիկ հանդգնել են խոսել և այժմ էլ խոսում են համամարդկային բարձր գաղափարների և ազգերի համերաշխության մասին։

Իսկ ինչ վերաբերմունք են ունեցել նրանք դեպի Վրաստանն ու Ադրբեջանը։ Երկու-երեք տարվա ընթացքում շարունակ ընդհարումների մեջ են եղել նրանք այդ երկրների հետ, մինչ այն աստիճան, որ իմպերիալիստական Անգլիայի գեներալներն ու դիպլոմատները քանիցս հայերին մեղադրել են ազգային կռիվներ սարքելու և իրենց հարևանների դեմ դավեր նյութելու մեջ. մի շարք փաստեր կան այս մասին հենց նույն Ահարոնեանի նամակներում և արտաքին գործոց նախարարության հաստատոր տետրակներում։ Բայց նկատենք մի այսպիսի փաստ. Փարիզում վրացիների ներկայացուցիչ, կարծեմ Չխեիձեն, վորոշ վախ ունենալով Դենիկինի զորքերի առաջխաղացությունից 1919 թ. Ահարոնեանին և հայ պատվիրակության առաջարկել է Եվրոպային ներկայացնել բողոքի թուղթ Դենիկինի գործողությունների դեմ։ Հայերը վորոշ պատասխան չեն տալիս, հարցը շարունակ ձգձգում են, աշխատում են դրությունից մի կերպ դուրս գալ, նույնիսկ հնարում են Հայաստանի ծագման մասին մի ամբողջ թեորիա։ Իր 1919թ. հուլիս 31-ից արտաքին գործոց նախարար Ս.Տիգրանեանին ուղարկած նամակում Ահարոնեանը խորհուրդ է՝ «ամբողջական Հայաստանը միայն Ռուսաստանից չե ծագում առած, այլ և Թիւրքիայից, հետևապես նա չի կարող և չպետք է կովկասեան ժողովուրդների օրիենտացիա ունենա»։ Դենիկինի դեմ չեն բողոքում։ Իսկ մի երկու ամսից դուրս է գալիս այն, ինչ 1919 թ, սեպտեմբեր 22-ին Խատիսեանը 3898 թվահամարով հաղորդում է Ահարոնեանին՝ «Հայտնում են ձեզ տեղեկություն և á titre strictement confidentiel (այսինքն վորպես ամենախիստ գաղտնիք—Ա. Մ.), վոր Դենիկինից ստացել ենք 3,000,000 փամփուշտ»։

Վերջում արժեր մի քանի խոսք էլ նվիրել Ահարոնեանի և Նուբար փաշայի պատվիրակությունների փոխհարաբերության։ Բանից դուրս է գալիս, վոր այդ պատվիրակությունները իրար հետ մրցել են։ Հիմա էլ, ի հարկե, մրցում են, թեև երբեմն նրանք դաշն են կապել իրար հետ. բայց ով է դրան հավատացողը։ Ամենից առաջ ասենք, թե ինչու չենք հավատում։ Կա մի փաստ։ Իր մի կարճ նամակում, 1919 թ. ամրան, Ահարոնեանը բառացի հրատեալն է գրում. «Մեր կառավարության հակառակորդները, օտար և մանավանդ հայ, ամեն կողմ տարածում են... զրույցներ մեր հանրապետության մասին աշխատելով ցույց տալ նրա վարիչներին, վորպես բայշևիկներ... այս կարգի պրոպագանդան սկսվեց ժողովրդական կուսակցության մեր կառավարությունը թողնելուց ի վեր։ Պատվիրակությունս... կարծում է, վոր լավ տպավորություն կթողնի արտաահմանում... ժողովրդական կու-

սակցութեան հետ մեր կառավարութեան համաձայնութիւնը» և այլն։ Այս ֆիզվիտութիւնը ցույց է տալիս, թե ինչ գին ունի այսորվա դաշինքը այդ երկու տարրերի միջև։ Այժմ գնանք առաջ։

Երկու պատվիրակութիւնների մրցակցութիւնը և իրար դեմ ունեցած թշնամութիւնն այն աստիճանի են հասած եղել 1919 թ. ամրանը, որ Ահարոնեանն իր մի շարք նամակներում, գոնե նրանցից երևում, լուտանք չի մնացել, որ չթափի իր հակառակորդ Պողոս Նուբարի գլխին, որին ի դեպ ասած, նա շարունակ փաշա է անվանում։ Որքան էլ դա անդուրեկան լինի, հիշենք այդ լուտանքներից մի քանիսը, քանի որ դա քաղաքական նշանակութիւն ունի. չէ՞ որ պետք է ցույց տալ, թե Հայաստանի «ազատութեան» համար «աշխատող» մարդիկ ինչ միտումներով են ղեկավարվում։

1919 թ. օգոստոս 8-ին Խատիսեանին ուղղած նամակում Ահարոնեանը գայրացած է, որ «առ՝ասարակ այդ արևմտահայ խորհրդի վարիչները» անջատողական քաղաքականութիւն են վարում, որ նրանք, ինչպես մի վոմն բուլղարացի Գրիգոր, փաշային դիմումներ են անում, որպես վարչապետի, որ նրանք «և այնքան տղայամիտ են եղել, որ առանց պաշտոնական հայտարարութեան այստեղից՝ նրան հավատացել են, որ փաշան այստեղ կառավարութիւն ունի և նրան դիմում են իբրև վսեմափայլ վարչապետի»։ Բանն ինչումն է։ Տաճկահայերն իրենց պատվիրակութիւնը համարել են նույնչափ օրինական, թերևս և մի բան ավելի, քան դաշնակցական կառավարութեան (Ահարոնեանի) պատվիրակութիւնը։ Այդ երկուսը հարց են բարձրացրել իւրաքանչիւրի պրիորիտեի մասին։ Դաշնակցական կառավարութիւնն իրեն համարում է միացեալ, միջերկրական Հայաստանի կառավարութիւն, իսկ Նուբարի մարդիկ դրան համամիտ չեն։ Երկու կողմն էլ «աշխատում» են հանուն հայկական հարցի, բայց հարցը մոռացութեան տված, նրանք վեճ են սարքում այն մասին, թե ով ավելի լավ է, ով է ավելի բարձր, ով է տերն ու տիրականը «մեծ» ու «միացեալ» Հայաստանի, որը դեռ չկա, որը պետք է «ստանալ» և որի համար դեպի Եվրոպա են անցել այդ պատվիրակութիւնները։

Բայց շարունակենք։

Ահարոնեանը Նուբարին և տաճկահայերին շպրտում է՝ «որքան թույլ է այս պարոնների մոտ պատասխանատվութեան զգացումը». «փաշան և իր շուրջը հավաքած պնակալեզները վայելուն բարձրացրին». «իբր նա (այսինքն Նուբար փաշան—Ա. Մ.) զգում է, որ իշխանութիւնը ձեռքից գնում է, ընդունակ ամենավատ արարքների, մինչև հանցանք» այնուհետև Ահարոնեանը նրան անվանում է «վտանգավոր ծերունի» «վոտնձգութիւններ» անող, «պետական ըմբռնումներից զուրկ», «տիրական բռնապետական խառնվածք» ունեցող, «անսանձ» ու «ամոթալի անափառութեան» տեր, որ հաճախ այս եոթանասուն ամեա ծերունուն դարձնում է ծիծաղելի»։ Այլևս, «դեմոկրատական հոգուց խապառ թափուր այս մարդը բուռն ատելութիւն ունի դեպի

ռամկավար կարգերը»։ «Պողոս փաշան շատ հասկանալի պատճառներով բարեհաճ է միմիայն դեպի հայ ժողովրդական կուսակցությունը»։ «Ցավալին այն է, որ այդ խեղճ ծերունին ինքը զինքը համարում է կառավարությունից ու պարլամենտից բարձր, միակ շեֆը հայոց ազգի»։

Ահարոնեանը պահանջում է նոր պատվիրակություն կազմել, որովհետև նա Նուբար փաշային մեղադրում է նույնիսկ Հայաստանի և նրա պատվիրակության դեմ վորոգայթներ սարքելու մեջ, թե իբր Նուբար փաշան հետին դռնով գնում է եվրոպացիների մոտ, բամբասում ու վարկաբեկում է կառավարության պատվիրակությունը, չի ճանաչում Երևանի կառավարության պատվիրակությունը, իրեն հատուկ առաջարկներ է անում ապագա Հայաստանի մասին և այլն և այլն։ Նոր պատվիրակության կազմի մասին գրելիս Ահարոնեանը Պողոս Նուբարի ընկերակիցների հասցեին հետևեալն է ուղղում՝ «Նրան շրջապատող երեք արբանեակներից Թեքեեան, մանավանդ Զոպանեան և վերջապես պրոֆեսոր Տեր-Հակոբեան, վոր Համլետի մեջ Պոլոնիոսի տիպն է նոր պատվիրակության մեջ լինելու են կամ թողնելով վորպես անխուսափելի չարիք կամ Թեքեեանին կամ Հակոբեանին. Զոպանեան արժանի չե վորևե պատվավոր տուն մտնելու, ուր մնաց թե պատվիրակություն»։

Պատկերը պարզելու տեսակետից սա էլ բավական է։ Կարիք կա արդեոք մեկնաբանության։ Անշուշտ ընթերցողը հասկացավ, թե հայկական հարցի լուծման աստառում ինչ է գտնվում, թե ովքեր են լծված եղել այդ գործին,—Ահարոնեաններ, վորոնք անձնական, փառասիրական, եսասիրական տենչերով տարված շահագործել են այդ հարցը, այն պրոֆանացիայի են ենթարկել և աշխատել են ամեն կերպ վարկաբեկել Եվրոպայում հայ աշխատավորությունը։

Սակայն վերջինիս չի կարելի այդպիսի հեշտությամբ վարկաբեկել։ Նա գնում է իր ճանապարհով և կգնա առաջիկայում էլ. իսկ նրա անկոչ պաշտպանները թող իմանան, վոր նրանց արարքները հայտնի են Հայաստանի աշխատավորությանը, նրանք վաղը հայտնի կդառնան և վողջ հայ աշխատավորությանը։ Գրավոր փաստեր կան։ Եվ վորքան ավելի լայն ժողովրդականություն ստանան նրանք, վորքան շատ կարդան և շատերը իմանան դրանց մասին, այնքան ավելի լաւ Հայաստանի խորհրդային կարգերի և առհասարակ հայ աշխատավորության համար։

Սույն գրքույկում հրատարակում և հասարակության լիակատար ժառանգությունն ենք դարձնում այդ արտառոց փաստերը։

Ալ. Մարտունի

ԱՇԱՐՈՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

I.

Այս նամակն Ահարոնեանի մի ընդարձակ նամակի վերջին մասն է, որ ներկայումս առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում։ Այդ նամակը գրված է 1919 թ. ապրիլ 24-ին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախարար՝ Ս. Տիգրանեանին։

Ձեզ հեռագրել եմ, որ այստեղ Պողոս փաշայի կառավարութիւն գոյութիւն չի ունեցել և չունի։ Զարմանքով իմացանք Պոլսի լրագրերից, որ Արևմտահայ համագումարն Երևանում այդ մտադրածին լուրի վրա որոշումներ և կայացրել։ Քաջազնունին նույնպես Թիֆլիզից հարցնում է, թե դա ինչ կառավարութիւն է և ինչու։ Ես ձեզ տեղեկութիւններ չեմ տվել այդ մասին։ Դրա փոխարեն ինչպես ձեզ հեռագրել եմ նույնպես այստեղ գումարված Թուրքահայ համագումարի վորոշումով կազմվել է Թուրքահայ պատվիրակութիւն։ Ձեզ արդեն գրել եմ այդ համագումարի մասին։ Տամ և լրացուցիչ տեղեկութիւններ, որոնց մի մասը գուցե կրկնութիւններ լինեն. ներեցեք։ Պողոս փաշան իր պատվիրակութեանը ուժ տալու և ժողովրդական սանկցիա ստանալու համար վորոշած է եղել այս տարվա սկզբին համազգային համագումար հրավիրել Փարիզում։ Եւ նույնիսկ հաշվի չառնելով Հայաստանի հանրապետութեան գոյութեան փաստը՝ հրավեր է ղրկել. «Ռուսահայութեանը՝ ուղարկել ութը ներկայացուցիչ այդ համագումարին մասնակցելու»։ Այս հրավերից անմիջապես հետո՝ հասավ մեր պատվիրակութիւնը (փետրվար 3-ը) և ընդհանուր ծրագիրը խախտվեց։ Մենք հայտարարեցինք, որ մեր կառավարութիւնը մեզ ուղարկել է վոչ թե վրևն համագումարի մասնակցելու և այն էլ պատվիրակութիւն ընտրելու համար, այլ մենք արդեն իսկ պատվիրակութիւն ենք կազմակերպված հայ պետութեան։ Բայց վորովհետև այլ տեղերից պատվիրակներն արդեն-իսկ հավաքվել եին՝ մանավանդ Թուրքահայ կազմութիւնների մեծ մասամբ և Ձեր իսկ հրահանգով, որ հատապատասխան եր և մեր՝ պատվիրակների դգացմունքներին—մենք պարտական եին ամեն ինչ անել՝ համերաշխ գործելու համար Թուրքահայ ներկայացուցիչների հետ։ Մենք հայտարարեցինք, որ թեև իբրև պատվիրակ այս համագումարին մասնակցել չենք կարող, բայց համաձայն մեր կառավարութեան հրահանգների՝ պատրաստ ենք ձեռք ձեռքի տված գործել Թուրքահայ համագումարի ընտրելիք պատվիրակութեան հետ և համագումարի նիստերին ներկա կլինենք սոսկ տեղեկատուի և խորհրդատուի հանգամանքով՝ հեշտացնելու համար աշխատանքները։ Ճշմարիտ և այս Թուրքահայկական համագումարը թե իր ընտրութեան եղանակով, թե իրավական տեսակետից շատ ու շատ հեռու է Թուրքաց Հայաստանը ներկայացնելու իրավունքից, բայց մեր կողմից ժխտել

այդ իրավունքը և չճանաչել այդ համագումարը վորպէս լիազոր, դա կնշանակի անագէն փոթորիկ բարձրացնել և պառակտում առաջ բերել—մանավանդ վոր Պողոս փաշան սկզբի վարանումներից հետո հարեց մեծամասնութեան՝ հայտարարելով այս համագումարը լիազոր և նույնիսկ «համազգային»։ Պետք եղավ մեր միջամտութիւնը՝ հասկացնելու և համոզելու համար, թե այս համագումարը համազգային կոչվել չի կարող, այլ ամենաշատը և այն էլ դժվարաւ կարող է նկատել Թուրքահայոց համագումար։ Համոձայնեցին իրենք իրենց նկատել վոչ թե համազգային—այլ «ազգային» համագումար։ Այո, «ազգային համագումարի» անդամները, բացառութեամբ Պոլսի երեք ներկայացուցչի, կովկասեան զաղթականների երկու ներկայացուցչի, ինչպէս նաև Միջագետքից և Սիրիայից եկած երկու պատվիրակների, մնացածը 32-ից մոտ 25 հոգին, եկած էին Թուրքահայ գաղութներից։ Այսպես 4-ը Ամերիկայից, 2-ը Եգիպտոսից, 2-ը Իտալիայից, 2-ը Բուլղարիայից, 2 ը Լոնդոնից, Պարիզից և այլն։ Զբաղեցնելով այսքանով, համագումարը հրավիրեց ձայնի իրավունքով նաև մի քանի հոգի իր ուզած մարդկանց։ Այսպիսով երկրից և ժողովրդից կտրված նույնիսկ չը (անընթեռնելի) հոգեբանութեան ու մտածումով մարդկանց թիվը (անընթեռնելի) համագումարում՝ տալով այս ժողովին շատ արտառոց կերպարանք։ Մարդիկ, վորոնք 10—20 տարի առաջ, վոմանք նույնիսկ ի ծննդե, միանգամայն անծանոթ ու անմասն եին հայկական բարդ ու դժվարին իրականութեան խնդիրներին, Պողոս փաշայի շնորհիվ դիտվեցին հայ ժողովրդի բաղդը տնորինելու։ Պողոս փաշայի սխալներից ամենաարտասովորն էր այս տխուր, այս վհատեցուցիչ ժողովը։ Այստեղ կար Նորատուկեան եֆենդին, վոր ընտրվեց համագումարի նախագահ, այստեղ եին Քելեկեան ու Ներսես խանները Պարիզից, պրոֆեսոր Թումանեանը Լոնդոնից և այլն։ Իշխող տրամադրութիւնն եղավ այս համագումարում հենց սկզբից անվստահութիւն և սառնութիւն դեպի Հայաստանի հանրապետութիւնը և ինչոր անորոշ վախ կովկասահայութիւնից։ Խորապես ցավում եմ ասել, վոր այս տրամադրութեան զորավիգ եղավ Պողոս փաշան, հակառակ իմ բոլոր բարեացակամ ջանքերի։ Մեր երկու ամսվա անպտուղ և անմիտ նիստերից ու վեճերից հետո համագումարը վորպես գրեթե միակ արդիւնք ընտրեց իր ազգային պատվիրակութիւնը հրամանգելով նրան մեզ հետ համերաշխ գործել բոլոր ազգային խնդիրներում։ Պետք եր հաշտվել այս խրոխտութեան հետ, պառակտումից խուսափելու համար։ Եւ հաշտվեցինք։ Փորձ եղավ միացեալ Հայաստանի միացեալ կառավարութեան և միացեալ պատվիրակութեան սկզբունքները վորոշելու։

Մենք պնդում ենք, վոր միացեալ կառավարութիւնը պետք է ստեղծել երկրում, Երևանում և ապա նրա հրամանգով կազմել միացեալ պատվիրակութիւն։ Նրանք առաջարկում եին անմիջապես կազմել միացեալ պատվիրակութիւն այստեղ և այստեղ էլ ընտրել միացեալ կառավարութիւն, ապա

գնալ Երևան։ Ես ստիպված եի հայտարարել, վոր առանց իմ կառավարության հրահանգի այսպիսի ծանրակշիռ հարց լուծելու հնարավորություն և իրավունք չունի մեր պատվիրակությունը և վոր միակ ելքն ե մի պատվիրակություն ղրկել Երևան, վոր կտանի այստեղից ընդհանուր սկզբունքներն և այնտեղ կլուծեն հարցը։ Զհամաձայնվեցին։ Առաջարկ եղավ հանրապետական կառավարությունը հռչակել միացեալ Հայաստանի կառավարություն և նրա ծոցում ինչպես և պարլամենտում դնել վորոշ, համապատասխան թվով Թուրքահայ ներկայացուցիչներ, այդ էլ մերժեցին։ Պողոս փաշան եկավ առաջարկելու, վոր մի հատիկ պատվիրակություն լինի «անպատճառ իր նախագահությամբ»։ (Այո իր խոսքերն են)։ Ես պատասխանեցի, վոր բնավ դեմ չեի իր նախագահության և միացեալ պատվիրակության պայմանով, վոր այդ կատարվի իմ կառավարության հրահանգով և երկրորդ Պողոս փաշան ինք զինքը պատասխանատու նկատի մեր կառավարության ու պարլամենտի առջև, ինչպես ես պատասխանատու եմ։ Մերժեց՝ ասելով վոր հանրապետական կառավարությունն ինքն տակավին ճանաչել չի կարող։ Եվ այսպիսով ունենք այժմ երկու պատվիրակություն, երկու նախագահներից։ Թուրքահայ պատվիրականությունը կազմված ե վեց անդամից, Պողոս փաշա նախագահ, Պրոֆեսոր Տեր Հակոբեանը Պոլսից, դոկտոր Նվրուզ և Թեքեան Եգիպտոսից, Զոպանեան Պարիզից և Բաստրմաճեան։ Կարելի եղավ գեթ համաձայնություն կայացնել, վոր երկու պատվիրակությունները վոչ մի դեպքում սեպարատ քայլեր չանեն և խաղաղության կոնգրեսին ներկայացնելիք բոլոր թղթերն երկու նախագահների ստորագրությունը կրեն, այս համաձայնության արդյունքն ե, վոր ամերիկացիների հետ կապած պայմանն ստորագրել ենք ես ու փաշան։

Զմոռանամ բացադրել, սակայն, փաշայի և իր շրջապատի վատառողջ տրամադրության պատճառները դեպի Հայաստանի Հանրապետությունը։ Նրանք վախենում են, ինչպես ասել են բազմիցս, թե Թուրքիո հայությունը կուլ կերթա ռուսահայերին. քանի վոր վերջիններս ավելի ուժեղ են թվով, տնտեսապես և իմացականությամբ։ Այն ինչ փաշան անվանում ե ապսուրթ... վախի երկրորդ պատճառն այն ե, թե մենք ամբողջապես ընկերավարականներ ենք, թէ Դաշնակցությունը, վոր իրենց կարծիքով իշխում ե և թե մեր միս կուսակցությունները և վերջապես քաղաքական վախը, թե ռուսները վերջի ի վերջո կզորանան կգան կովկասեան Հայաստանը տիրանալու, հետևապես լավ չի թիւրքաց Հայաստանը նրան միացնելու, այլ լավ ե նախ կազմակերպել Թուրքահայ պետությունն, վորին և կգա միանալու իր հոժար կամքով Կովկասահայ հանրապետությունը։ Ինչպես նկատում եք այս բոլորի մեջ սոփեստությունն ավելի շատ ե, քան լուրջ մտածումը և մենք հիմքեր ունենք ենթադրելու, վոր այս վախերի հիմնական պատճառներից գլխավորն այստեղ համախմբված Թուրքահայերի անձնական երկյուղն ե, թե իրենք անհատապես չպիտի կարողանան իրենց ուզած դերը խաղա

ռուսահայերի ուժեղ կազմի մեջ։ Ցավ է ինձ ասել, որ այս անառողջ մթնոլորտը ստեղծելուն այստեղ քիչ չեն օժանդակել Անդրանիկի և իր շրջապատի զանազան ժամանակ փաշային դրկած նամակները և հեռագրերը։ Վերջին նամակը, որ ստացվեց այս օրերն Երևանից, որով ամենամռայլ գույներով են ներկայացված միշտ Կովկասահայութեանն ու մեր ազատական կոիվների հեղհեղուքները, աշխատելով վարկաբեկել մեր բանակը և մեր բոլոր զոհաբերութիւնից անհուն պատրաստակամութիւնը։ Եթե հնար է, շատ շատ խնդրում եմ, ում ձեռքով որ կարելի է, ազդել Անդրանիկի վրա, որպեսզի նա իր ահագին ժողովրդականութիւնը, որ բոլորիս ստեղծածն է, այսպիսի ապաազգային գործերին չծառայեցնի։ Ռուսահայ և Թուրքահայ խնդիրներ հանելը այս օրերում, երբ մենք ձգտում ենք մեր միացեալ հայրենիքի ազատագրութեան, անուղղելի հարված կհասցնի ազգային դատին։ Ես փորձեցի այստեղ իրադարձութեան ճշգրիտ պատկերը տալ Ձեզ, պարոն նախարար, բայց և այնպես, ինչպես նկատում եք, միացեալ Հայաստանի կառավարութեան և պարլամենտի խնդիրը մնում է առկախ։ Ժամանակը հասած է վերջ տալ այս դուալիզմին և քաղաքական աշխարհի առջև ներկայանալ մի ճակատով։ Շուտով միջազգային հանձնառութիւններ պետք կլինի անել, պայմանագրեր ստորագրել, ֆինանսական ու տնտեսական փոխառութիւն կնքել մանդատ հանձն առնող պետութեան հետ հարաբերութեան մէջ մտնել, նույնիսկ մանդատի պայմանները քննութեան ենթարկել. այս բոլորի համար անհրաժեշտ է միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւն, որպեսզի կարողանա հանուն համայն հայութեան, իբրև կազմակերպված պետութիւն գործել. այլապես մանդատորը մեզ հետ կարող է վարվել իր ուզածի պես և մեր քաղաքական ազատութիւնն ու անկախութիւնը կվտանգվի։ Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետութեան պատվիրակութիւնը և իր խորհրդականները Մ. Ս. Աճեմեան, Հովհաննես Խանմասեհեան, Մ. Վարանդեան, (որ քարտուղարն է մեր պատվիրակութեան) ինչպես և Լևոն Շանթ, պրոֆեսոր Աստվածատուր Խաչատրեան, Փաստրմաճեան միաձայն եկան այն եզրակացութեան, որ Հանրապետական կառավարութ. պետք է միջոցներ ձեռք առնի այդտեղ Երևանում գլուխ հանել միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւն ու պարլամենտ համաձայնելով տեղվույդ արևմտահայ խորհրդի հետ, որ հույս ունենք ավելի առողջ մտածումներով է առաջնորդվում, անշուշտ, քան այստեղի Թուրքահայ համագումարը։ Ընտրութիւնների կանոնագրութեանը շատ արժեք տալու չէ, քանի որ այս բոլորը ժամանակավոր է։ Հեշտութիւն ունենք հրավիրել ներկայացուցիչներ և Կ.-Պոլսից և մանավանդ Ամերիկայից, ուր հոծ և լավ հայութիւն կա։ Մնացած գաղութները կարելի է միանգամայն անտես առնել, թվով ու վորակով միանգամայն անարժեք են։ Վորպես Միջագետքի հայութեան ներկայացուցիչ կարելի է այստեղից, հեռագրով հրավիրել և պրոֆեսոր Խաչատրեանին, Կիլիկիայում ընտրված

ազգային մարմին կա արդեն, վոր նույնպես կարող է իր ներկայացուցիչն ուղարկել։ Կարծում եմ, վոր Կովկասի արևմտահայ խորհուրդը եթե կամենա և ձեռներեցություն ստանձնի մեր կառավարության հետ կարճ ժամանակում հնարավոր կլինի գլուխ բերել միացեալ կառավարություն և պարլամենտ։

Հաղորդելով Ձեզ այս բոլորը պ. նախարար ես կսպասեմ Ձեր հրահանգներին և տեղեկություններին. խնդրում եմ միայն փութացնել, եթե հնար է, և մեզ շարունակ իրազեկ պահել հեռագրերով։ Վորչափ և ծանր լինին այն դժվարությունները, վորոնցով շրջապատված են հանրապետությունն ու իր հոգնաջան կառավարությունը, սփոփիչ համոզում ունիմ վոր այդ բոլորը. ժամանակավոր է և վոր հայոց հարցի վերջնական կարգադրումը շատ և շատ մոտ է։

Խորին հարգանքներով՝ Ա. Ահարոնեան.

Նախագահ Հայաստանի Հանրապետության պատվիրակության.

II.

Փարիզ 7-ն օգոստոս 1919 թ.

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար
եւ Լարչապետ սեծահարգ պ. Ա. Խատիսեանին.

Պարոն նախարար։

Շատ ուշ, թերթերից իմացանք մայիս 28-ի ակտի մանրամասնությունները. պաշտոնական հեռագրով մեզ հասած լուրերը շատ եին հակիրճ ճշգրիտ գաղափար կազմելու համար մեր կառավարության այդ նշանավոր պետական ակտի մասին։ Վերջին սուրհանդակները բերին միայն մայիս 28-ին վերաբերեալ հայտարարագիրը մեր կառավարության և ուրիշ վոչինչ։ Այս հատ ու կտոր, պաշտոնական և վոչ պաշտոնական տեղեկություններից մենք գիտենք առայժմ, վոր.

1. Կառավարությունը, առանց պարլամենտի, մայիս 28-ին հայտարարել է ամբողջական Հայաստանի անկախությունը՝ ընդունելով պարլամենտում արևմտահայությունից 12 ներկայացուցիչներ.

2. Կառավարությունն այսպիսով ինքզինքը հռչակել է ամբողջական Հայաստանի Կառավարություն։

3 Մի՞ւս կուսակցությունները դեմ են եղել այս ակտին զանազան պատճառներով և ժողովրդական կուսակցությունն իր հակամարտությունն առաջ տանելով, դուրս է կանչել նախարարական խորհրդից իր ներկայացուցիչներին, միաժամանակ հրաժարվելով նոր պարլամենտական ընտրություններ-

ըից, սոցիալ-դեմոկրատների հետ միասամ: Գիտենք նաև, վոր ժողովրդական կուսակցութեան նախարարները խորհուրդը ձգելուց առաջ, սարքադրած են եղել մայիս 28-ի ակտը։ Ձեր հեռագրից գիտենք նաև, վոր նոր պարլամենտի ընտրութիւնները տեղի են ունեցել և պարլամենտը գումարվելու ե օգոստոս մեկին։

Շտապեմ ասել, վոր այս տեղեկութիւնները հետզհետե հասնելով իրենց ազդեցութիւնն ունեցան մեր պատվիրակութեան և Պողոս փաշայի ու իր շրջապատի հարաբերութիւնների վրա, մասնավորապես ամբողջական Հայաստանի խնդրի շուրջը։ Տամ ձեզ նախ այս խնդրի փոքրիկ պատմութիւնը։ Այստեղ գումարված թուրքահայ կոնֆերենցիան ցրվելուց առաջ իր ընտրած պատվիրակութեանը (փաշային և ընկերներին) հանձնարարած եր Հանրապետութեան պատվիրակութեան հետ համերաշխ խորհել և ամբողջական Հայաստանի միակ կառավարութիւնը կազմելու մի ծրագիր մշակել, իհարկե, ենթարկելու համար այն հանրապետական մեր կառավարութեան սանկցիային։ Այս վորոշումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հիշեալ կոնֆերենցիայի փոքրամասնութեան ջանքերը՝ ճանաչել տալ մեր կառավարութիւնը վորպես ամբողջական Հայաստանի կառավարութիւն, մերժվեց Պողոս փաշայի կողմնակիցների մեծամասնութեամբ։ Այս ժամանակից անցան ամիսներ և մեր միացեալ ժողովներում երկու պատվիրակութիւններին—այսպես կոչված ամբողջական Հայաստանի պատվիրակութեան նիստերում (Dèlègation de l'Armenie intègrale) Պողոս փաշան բնավ չկամեցավ թուրքահայ կոնֆերենցիայի պահանջն ամբողջական Հայաստանի միակ կառավարութեան վերաբերեալ—մեջտեղ հանել, հակառակ նույնիսկ մեր կողմից վորոշակի կերպով արտահայտված ցանկութեան և քաղաքական շրջանների և մեր օտար բարեկամների անուղղակի ներշնչումներին։ Պարոն Մ. Աջեմեանը, դեպի վորն առանձին վստահութիւն եր տածում փաշան, իր կողմից փորձեց՝ համոզել թե՝ անհրաժեշտ ե միակ կառավարութիւն և միակ պատվիրակութիւն մեր հարցի լուծումն այս վտանգավոր երկվութեան շրջանից դուրս հանելու համար։ Նրա ճիգերն ևս ապարդիւն անցան։ Պողոս փաշան նախ պնդում եր, վոր դա անժամանակ ե, հետո, երբ կարելի եղավ համոզել, վոր նրա քաղաքական վախերը հիմնավորված չեն, երբ ինքն ևս համաձայնեց, վոր այս երկվութիւնը վտանգաւոր պարագա ե մեզ համար, գտավ, թե չկա մի այնպիսի ծրագիր վոր ինքը կարողանա ընդունել։ Մեր առաջարկը սակայն շատ պարզ ե և շատ արդար։ Մենք առաջարկում ենք 2 հիմնական և կարևոր սկզբունքներ—1. Ապագա ամբողջական Հայաստանի պարլամենտում կովկասահայերին հավասար թվով թուրքահայեր դնել (անկախ վիրջիններիս ընտրողների թվի նվազութիւնից) և 2. Կառավարութեան մեջ նրանց ներկայացուցիչներին համապատասխան տեղ տալ, թողնելով այսպիսով կազմված միակ կառավարութեանը մեր երկու պատ-

վիրակութիւնները ձուլել ի մի ըստ իր հայեցողութեան։ Հասկանալի եր, վոր նոր պատվիրակութիւնն ամբողջապես ենթակա պիտի լիներ միակ կառավարութեանը և պատասխանատու նրա առաջ։ Այսքան պարզ, արդար առաջարկը նույնպես հաճելի չեղավ փաշային և նա իր պատվիրակութեան մեծամասնութեամբ՝ չորս ընդդեմ երկուսի (Փաստրմաճեան և բժ. Նեվրուզ) ի դերև հանեց համաձայնութեան մեր բոլոր փորձերը. միաժամանակ մեզ համար պարզվում եր, վոր Պողոս փաշայի այդ ձգձգումներն ու չկամութիւնը ավելի լուրջ, ավելի ծանրակշիռ, ծածուկ պատճառներ ունին, քան մենք կարծում եինք։ Փաշան մեզ հետ իբր թե բանակցելով, միաժամանակ մեզանից ծածուկ աշխատում եր «իր պատվիրակութիւնը ճանաչել տալ վորպես Հայաստանի կառավարութիւն»։ Նրա ներկայացուցիչ Սվազլիի ջանքերն Ամերիկայում այս ուղղութեամբ, մեզ հայտնի եին, թեև ինքը հերքում եր։ Այդ մասին ներփակ կգտնեք Կարդաշեանի հեռագիրը մեզ։ Սրանից առաջ ստացել ենք և նամակներ, վորոնք կասկած չեին թողնում, վոր երկու տեսակ աշխատանք ե կատարվում մեր շուրջը փաշայի և իր արբանեակների ձեռքով. 1. Ամեն միջոցով վարկաբեկել և նսեմացել մեր կառավարութիւնը հաչս օտարների, վորպես բայլշևիկների կառավարութիւն, և 2. այդ գնով հաջողեցնել, վորպեսզի փաշայի նախագահած պատվիրակութիւնը ճանաչվի վորպես Հայաստանի կառավարութիւն։ Անշուշտ պիտի զարմանաք, թէ ինչու այդքան ինքասալի քայլերն այն մարդու կողմից, վոր ահա տարիներից ի վեր համարվում ե Եվրոպայում և առհասարակ արտասահմանում մեր դատի վարիչը։ Նախ այստեղ ահագին դեր ունի փաշայի տիրական, բռնապետական grand seigneur խառնվածքը և դրան համապատասխան աշխարհայացքը, ապա մեն մենակ դեր կատարելու իր անսանձ, նույնիսկ ամոթալի սնափառութիւնը, վոր յաճախ այս եոթանասուն ամեա ծերունուն դարձնում է ծիծաղելի։ Պետական ըմբռնումներից զուրկ, դեմոկրատիկ վոգուց իսպառ թափուր այս մարդը բուռն ատելութիւն ունի դեպի ռամկավար կարգերը և նրանց վարիչ կուսակցութիւնները. այս զգացումը բնականապես նրան խոտելի ե դարձնում մեր իրականութեան մեջ գործող բոլոր դեմոկրատիկ և հեղափոխական կուսակցութիւնները՝ լինին դրանք սոցիալ-հեղափոխականները, սոցիալ-դեմոկրատներ և մանավանդ դաշնակցութիւն վորպես ամենից հզորը և վորի մասին իր արբանեակներն եռանդով տարածում են այժմ ամեն տեղ, թե բայլշևիկ ե, ինչպես և նրանից ծնված կառավարութիւնը։ Պողոս փաշան շատ հասկանալի պատճառներով բարեհաճ ե միմիայն դեպի հայ ժողովրդական կուսակցութիւնը։ Եվ քանի վոր հավատացած ե, վոր Երևանում հաստատվող վորևե կառավարութիւն ամբողջական Հայաստանն, անխուսափելիորեն իրեն անհունդուրժելի հեղափոխական և դեմոկրատիկ տարրերի գերակշռութիւնը պիտի ունենա, նա վճռել ե, ինչ գնով էլ լինի չենթարկվել այդ կառավարութեան, և ինչպես հետո կտեսնենք, նույնիսկ այն պահուն, եթե այդ

միակ կառավարությունն իր հաճությամբ կազմվի։ Ցավալին այն է, որ այս խնդիր ծերունին ինքզինքը համարում է կառավարությունից ու պարլամենտից բարձր, միակ շեֆը հայոց ազգի—«ես եմ ազգի շեֆը» այս արտահայտությունն է արած մեր ժողովում, որովհետև ինքն ընտրված է ոչ թե թուրքահայ կոնֆերենցիայից այլև կաթողիկոսից։ Երևանից ծագող ամեն մի իշխանության դեմ ըմբոստանալով՝ նա հեշտությամբ հասնում է թուրքահայերի և ռուսահայերի շահերի անորակելի արհամարհին։

Այս վատ մտայնությունն է պատճառն այն հուշագրի, որ նա անցեալներում ուղղեց կաթուղիկոսին, խնդրելով ներշնչել թիւրքահայ գաղթականներին չմասնակցել մեր պարլամենտական ընտրություններին և վերջերս, երբ լուր եկավ—տարաբախտ անճիշտ—թե մեր հանրապետական գնդերը շուտով գրավելու են Թուրքայաստանի գավառները—փաշան ինքն իրենից դուրս գալով բացականչեց գայրույթով՝ «Վոչ, սա բռնագրավում է»։ Կարծում եմ, որ այդ «բռնագրավում» բառը մենմենակ բավական է ձեզ գաղափար տալու համար, թե մինչև որ աստիճան ցավալի ըմբռնում ունի Գորոս փաշան ամբողջական և անկախ Հայաստանի մասին։ Եզրափակելով ցարդ գրածներս, կարող եմ ասել, որ թե իմ և թե իմ ընկերակիցների Հ. Օհանջանեանի, Հովհաննես Խան-Մասեհեանի, Մ. Վրանդեանի, Գ. Փաստրմաճեանի և այլոց խորին համոզումը վոր՝ 1) հետամտել և և կշարունակի հետամտել իր պատվիրակությունը ճանաչել տալ Հայաստանի կառավարությունն հանրապետական կառավարություն նկատելով վորպես տեղային վարչություն (administption locale), 2. Ամբողջական Հայաստանի կառավարությունն եթե ստիպված լինի ընդունել դա կլինի միակ պայմանով, որ այդ կառավարության մեջ իսկապես դեմոկրատիկ տարրերը գերիշխող չլինեն, և որ գլխավորն և ինքն իբրև հայոց դատի միակ ներկայացուցիչ, այդ կառավարության ըստ ձևի ենթակա, ըստ էության ենթակա չլինի ու իր գործողությունները դուրս մնան վորևե կառավարության իրական կանտրոլից։ Մեր այս համոզումն, ինչպես կտեսնեք, լիուլի ապացուցվեց վերջին օրերի անց ու դարձից։ Բայց նախ քան Ձեզ զեկուցանեմ վերջին օրերի մեր բանակցությունները և համաձայնության փորձերը փաշայի հետ, ես առաջ կբերեմ ի հա տատությունն մինչև այժմ իմ ստացած երի ամերիկահայ փաստաբան Կարդաշեանի մի հեռագիրն ինձ ուղղված, վոր ստացա այս օգոստոս 3-ին։ Նախ ասեմ, որ Կարդաշեանը մի և անդուն հայրենասեր է, Ամերիկայի հայկական տեղեկատու բիւրոյի գլխավորը և Ջերարի շատ մոտիկ մարդը։ Ջերարն, ինչպես գիտեք, պատերազմից առաջ Ամերիկայի դեսպան եր Բերլինում, և այժմ անդնահատելի ներանդով նախագահում է Հայաստանի անկախության կոմիտեին, վորի մեջ մտնում են շատ ազդեցիկ սենատորներ թե դեմոկրատ և թե հանրապետական կուսակցության, իմիջի այլոց, Լոջ Տաֆտ և ուրիշներ, Կարդաշեանը Ջերարի տեղեկատուն է մեր հանդեպ և ահա թե ինչ է հեռագրում ինձ։

«Հուգնիկ տեղեկացնում է Ջերարին թե ամերիկեան կոմիտեների առաջարկութիւնները՝ Հայաստանին նիւթապես ու բարոյապես օգնելու և փաստորեն մի կառավարութիւն ճանաչելու համար, հեռագրվել է Փարիզ, համաձայն նախագահի հրամանին։ Ջերարն ասում է թե երկու պատգամավորութեան գոյութիւնը Փարիզում, վորոնցից իւրաքանչիւրն աշխատում է ինքը ճանաչվի, չափազանց դժվարացնում է ամերիկեան կոմիտեի դրութիւնը։ Հրամայական պահանջ է, վոր նրանք համաձայնութեան գան այնպես, վոր նկատի առնվի մի կառավարութիւն և նրա միակ պատգամավորութիւնը»։

Այս հեռագրից նախ տեսնում ենք, վոր նախագահ Վիլսոնը հեռագրել է Փարիզ իւրայիններին (պատվիրակութեան կոմիտեներ) ամէն օգնութիւն անել Հայաստանին և ճանաչել նրա փաստական կառավարութիւնը և հետո ըստ ամերիկացի բանակցիների՝ միացեալ և միակ կառավարութիւնն անհրաժեշտութիւն և այս մեր դատի հաջողութեան տեսակետից. այնուհետև այս հեռագրով հաստատվում է և այն՝թե ինչ գրեցի ավելի վերը, այսինքն, փաշայի պատվիրակութիւնն առանց մեր գիտութեան. դիմումներ է արել իբրև կառավարութիւն ճանաչվելու համար։ Ճշմարիտ է, հեռագիրն ասում է վոր երկու պատվիրակութիւններից իւրաքանչիւրն արել է այդպիսի դիմում, բայց մեր արածը փաշայի գիտութեամբ է եղել և իր համաձայնութեամբ, մենք խնդրել ենք միշտ ճանաչել վոչ թե մեր պատվիրակութիւնը՝ ինչ վոր բացարձակ աբսուրդ կլիներ, այլ մեր հանրապետութիւնն և իր կառավարութիւնը, վորպես կորիզ ընդհանուր ամբողջացած Հայաստանի, իսկ փաշան ինչպես տեսնում եք ձգնել է ճանաչել տալ իր պատվիրակութիւնը վորպես կառավարութիւն Փարիզում, ինչ վոր կստեղծեր երկու կառավարութիւն, մեկ՝ Փարիզում և մի ուրիշ Երևանում։ Այս վտանգավոր քայլերը կանխելու համար է, վոր մեր պատվիրակութիւնն իր խորհրդականներով վճռեց հնարավոր միջոցներով փութացնել միացեալ Հայաստանի միակ կառավարութեան կազմութիւնը։ Ցավում ենք սակայն, վոր մեր այդ խորհուրդը Երևանում իրագործվել է մի քանի ձախող պայմաններում, ինչ վոր առաջ եր բերել այսոր մի շարք անպատեհութիւններ, վորոնց մասին հետո։ Ահա այս պայմաններում ստացվեց մայիս 28-ի ակտի պաշտոնական լուրը և այն, վոր մեր կառավարութիւնը ինքզինքը հոչակել է համայն Հայաստանի կառավարութիւն։ Գողոս փաշան, դժգոհ այդ ակտից հայտարարեց ժեղ.թե ինքը և իր պատվիրակութիւնը հրապարակով և այն էլ օտար կառավարութիւնների հեռագրական միջոցներով բողոքելու է այդ ակտի դեմ։ Ավելացրեց, վոր ինքը կբողոքե մենակ և այն դեպքում, եթե իր ընկերակից պատվիրակներնիր են չընկերանան։ Մենք համոզված ենք, վոր այդ բողոքը գաղութներում և գուցե Կովկասում պիտի առաջ բերի հայ ժողովրդի պառակտում գուցե և Թուրքահայի և Կովկասահայի խնդիր մեջտեղ նետվի, վճռեցինք աշխատել կասեցնել փաշայի այդ քայլերը։ Դժվարին եղավ մեր

այդ աշխատանքն և մեր ճիգերը։ Փաշան համառում է, մասնավորապես քաջալերված ժողովրդական կուսակցության ըմբոստ դիրքից հույս ունենալով, որ անգամ կռվկասում նա իր հետ կունենա հիշեալ կուսակցությունը և իր կարծիքով կաղդի մեծամասնությանը։ Մի քանի օրվա վատ վեճերից հետո, մենք ավելի վատ և խռովահույզ բոզի առաջն առնելու համար համաձայնվեցինք նրանց դժգոհության մասին հեռագրել պայմանով, որ այնուհետև փորձենք համաձայնության գալ մեր փոխադարձ համաձայնության արդյունքը հաղորդել ձեզ մի հատուկ միության միջոցով։

Այդ հեռագիրը ձեզ ուղարկված է արդեն, հուսամ ստացել եք, ուղարկում եմ ներփակ նաև պատճենը. այս ձևով, ինչպես տեսնում եք, մենք կարողացանք համոզել, որ փաշայի պատվիրակությունը չլսողքի մայս 28-ի ակտի դեմ, այլ այն պայմանների, որոնց մեջ կատարվել է հիշեալ ակտը. «Ազգային պատգամավորությունն անընդունելի է գտնում այն պայմանները, որի մեջ, Երևանում, հայտարարվել է մայիս 28-ի ակտը»։ Հավատացած ենք, որ այդ հեռագիրը ձեզ մեծ դժգոհություն է պատճառել, բայց խնդրում ենք հավատալ, որ այլ հնար չկար այս համառ ծերունուն հետ պահել իր հրահրած ֆանատիկ քայլերից, որ նա անպատճառ իրագործելու էր, քանի որ պատասխանատվության մասին շատ նախնական ու շատ սահմանափակ հասկացողություն ունի։

Այս հեռագրից հետո վերսկսվեցին մեր ժողովները՝ մի եզրակացության գալու համար, և ահա այդ բանակցությունների ու խորհրդակցությունների ընթացքում հայտնի եղավ Պողոս փաշայի և իր կուսակիցների փայփայած նպատակն իր բոլոր տգիտությամբ։ Մենք, ինչպես ասացինք վերևում, համաձայն ենք նույնպես որ նոր երկու պատվիրակությունները նոր կառավարության հայեցողությամբ ձուլվեն կամ վերակազմվեն և դառնան մի պատվիրակություն ենթակա մեր կենտրոնական իշխանության, համաձայնեցինք նաև, որ Պողոս փաշան, որին համարում ենք միանգամայն իր ստանձնած պաշտոնից վար կանգնած, այնուամենայնիվ մնա նոր պատվիրակության միակ նախագահ, որովհետև հակառակ դեպքում նա շատ ավելի չարիքներ կարող է գործել ու ինքն և իր բազմաթիվ արբանեակները։ Խոստացանք այս բոլորը ամենայն շիտակությամբ հաղորդել մեր կառավարության որպես մեր կարծիքը և խնդրել որ նա ընդունի. անկասկած է, որ մեզնից ավելին պահանջել չեր կարելի, քանի որ միմիայն մեր կառավարությունն ու պարլամենտն է, որ գերագույն իրավունք ունի սանկցիա տալ, ընդունել կամ մերժել մեր խորհուրդները ու կարծիքները, մեր այս բոլոր և ըստ մեզ ծայրահեղ զիջումները չգոհացրին փաշային և իրայիններին և այստեղ է ահա ինչպես ասեցի պարզվեց նրանց նպատակի բոլոր վհատեցուցիչ ասեմ, թե տղայական պատկերը, նրանք պահանջեցին այս բոլոր զիջումների վրա ավելացնել նաև հետևեալները. 1. Նոր կառավարու-

թեան նախարարապետը պիտի լինի թրքահայ և հատկապես Պոլսոյ փաշան վոր պահելու և նաև միացեալ ու միակ պատվիրակութեան նախագահութիւնն, 2. Արտաքին գործոց նախարարութիւնը պիտի վերցվի դաշնակցական կուսակցութիւնից և նախարարը պիտի ընտրվի փաշայի պատվիրակութեան կամ իր ղրկած միսիայի և մեր կառավարութեան համաձայնութեամբ։ 3 Զինվորական նախարարը պիտի ընտրվի նույն կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, 4. Նոր կառավարութիւնը կազմվելուց հետո մեր պարլամենտը կտա իր սանկցիան և կցրվի, մինչև վոր թիւրքահայերի ընտրած պարլամենտի անդամներն էլ կհասնեն ու կմիանան, կազմելով միացեալ և ամբողջական Հայաստանի պարլամենտը, վոր արդեն կնտրի իր նոր կառավարութիւնը համապատասխան իր մեծամասնութեան, 5. Նոր միացեալ պատվիրակութիւնը լինելու և 6 կամ 8 հոգուց կազմված, վորի կեսը կնշանակի կառավարութիւնը (մեր այժմու) և միւս կեսը ինքը՝ հիշեալ պատվիրակութիւնը, վորին վերապահված և իրավունք իր անդամների միջից ընտրել այդ երեքին կամ չորսին։ 6. Այդ պատվիրակութիւնն այսպես կազմվելուց հետո թեև պաշտոնապես համարվում է պատասխանատու միացեալ ժամանակավոր կառավարութեան առաջ և ենթակա նրան, բայց էապես նա պիտի լինի անկախ և ազատ պետութիւններին ներկայացրած մեր մեմուարի սահմաններում և ըստ իր բարեհայեցողութեան վարել մեր դատը ու լինելիք բանակցութիւնները պետութիւնների և գուցե նաև մանդատորի հետ։ 7. Միացեալ ժամանակավոր կառավարութիւնն իրավունք չունի պատվիրակութեան այս կազմը հետագայում վորևե փոփոխութեան ենթարկել մինչև Հայաստանի մասին դաշնագրի վերջնական ստորագրութիւնը։ 8. Փաշան այդ պատվիրակութեան մեջ պիտի ունենա մեծամասնութիւն վորովհետև ասում եր այդ առթիվ փաշան «ես պետք է զինված լինեմ իմ համախոհներով ենթակա չլինելու համար կառավարութեան քմահաճույքներին»։ Ինչ ասել կուզի, վոր այս պայմանները մենք չեինք կարող համարել ընդունելի վոչ մեզ համար և վոչ կարծում եմ ձեզ համար, քանի վոր փաշայի ձգտումն եր և կառավարութիւն և պատվիրակութեան իր բացարձակ իշխանութեան տակ առնել և վոր գլխավորն է Փարիզից կառավարել երկիրը, ինչ վոր արտարոց և տղայական է։ Եվ սակայն բացարձակ պառակտման չհանգելու համար համաձայնվեցին, վոր նրանք իրենց հիշեալ պայմանները մեկ միսիայի միջոցով Երևան ուղարկեն ձեզ հետ եզրակացութեան գալու կամ մենք մեր կողմից ձեզ կգրենք թե վորոնք են այն պայմանները, վոր մեզ ընդունելի են թվում, եթե դուք հաճութիւն տաք, և վորոնք անընդունելի, ահա այս է, վոր ձեզ ներկայացրի ամենայն հարազատութեամբ, սրա հետ ներփակ ղրկում եմ նաև պատճենը նրանց ամբողջական ծրագրի։ Ինչպես կընդունեք նրանց պայմաններն այդ ձեր կառավարութեան և պարլամենտի գործն է, վոր միակ տերն ու տնորենն է հայոց աշխարհի և հայ ժողովրդի խնդրի. բայց պարտք եմ համարում ասել, վոր մենք համարում ենք փաշա-

յին չափազանց վտանգավոր մարդ այդքան իրավունքներ տալու համար. մենք վորպես փոքրագույն չարիք կարող ենք համաձայնվել, վոր նա դառնա ապագա միացեալ պատվիրակութեան միակ նախագահը և այդ էլ, ինչպես ասեցի, միայն նրա համար, վոր այլապես նա կարող և ազգը պառակտել և մեծամեծ չարիքներ գործել։ Սակայն պատվիրակութեան մեջ էլ չի կարելի թույլ տալ, վոր նա մեծամասնութիւն ունենար այնպես հլու և աննկարագիր անձեր ինչպիսիք են Պ. Ա. Զոպանեան, Վ. Թ'ոքեեան, Պրոֆ. Տեր-Հակոբեան, վորոնց վրա հենված ի հարկին նա ընդունակ և ինքզինքը Թուրքահայոց պաշտոնական ներկայացուցիչ հռչակել հակառակ անգամ միացեալ ժամանակավոր կառավարութեան։ Բայց այդ ինքնիշխան բուռն ընավորութեան տեր լինելով փաշան, ինչպես գրել եմ անցեալ զեկույցիս մեջ վատ քաղաքագետ է և միանգամայն անծանոթ մեր իրականութեան, անզգա մեր ցավերին, մի եգիպտացի, վորին մի արտասովի դիպված այս մեր պատասխանատու օրերին դրել է մեր ժողովրդի ճակատագրի վարիչների առաջին կարգին։ Երբ այստեղից մեկնելու լինի դեպի ձեզ եկող միսիան կգրեմ պատվիրակութեանս կարծիքը նոր պատվիրակութեան կազմի և անդամների մասին, առայժմ այս բոլորը պարտք համարեցի հաղորդել Ձեզ ի գիտութիւն, ավելացնում նաև, վոր մեր պատվիրակութեան անդամ պարոն Պապաջանեանը ըստ ամենայնի միացավ փաշայի պատվիրակութեան հայրցակետերին, ստեղծելով մեր պատվիրակութեան ներսում ամենաանբնական և ըստ իս իրավական տեսակետից անընդունելի մի դրութիւն, վոր չարաչար արտահայտվեց երկու պատվիրակութիւնների հարաբերութիւնների վրա, էլ ավելի դժվարացնելով համերաշխութեան գործը, վորի համար մենք այնքան ջանքեր ենք թափում։

Հայաստ. Հանրապ. պատվիրակութեան
նախագահ՝ Ա. Ահարոնեան

III.

Փարիզ, 8 օգոստոս 1919 թ.

Սիրելի Ալեկսանդր Իվանիչ

Երեք օրից ի վեր ծեծում եմ բոլոր դռները, աղմուկ եմ բոլորի ձեռքերը, վորոնք կարող են վորևե օգնություն հասցնել մեզ։ Հեռագիրը թաթարո-թուրքական այս նոր և դավադիր արշավանքի մասին մեզ ամենքիս շշմացրեց։ Դժբախտությունն այն է, վոր անմիջական օգնություն և հարկավոր և այդ կարող են անել միայն անգլիացիք։ Անգլիական բանվորական կուսակցությունը գրեթե բռնադատեց կառավարությունը հետ քաշել իր զորքերը Ռուսիայից և մենք դրա զոհն ենք։ Ընդամենը երկու շաբաթ առաջ Լոնդոնից մեզ հաղորդեցին, վոր անգլիական կառավարության հայտարարության համաձայն համայնքների պալատում, նրանց զորքերը Կովկասից չպիտի քաշվին և հանկարծ այս փոփոխությունը վոր մեզ հանկարծակի բերեց, այնուամենայնիվ նրանք կարող են միայն մեզ օգնել, այս պատճառով անմիջապես հեռագրեցի Լոնդոն Լոյդ-Ջորջին մեզ բարեկամ բոլոր անգլիացիներին համայնքների պալատի անդամներին և անգլիական բանվոր կուսակցության ղեկ—Անդամսին-ին, խնդրելով՝ եթե հնար է առժամապես անգլիական զորքերը չքաշել Կովկասից և վերջ դնել թուրք-թաթարական սպառնալի վտանգին։ Միաժամանակ հեռագրեցի Լիսյերն, ուր այժմ գումարված է ինտերնացիոնալը, խնդրելով անգլիական բանվորների ներկայացուցիչներին Հենդերսոնին և Մակդոնալդին ազդել իրենց կառավարության վրա և թողնել բրիտանական զորքերը Կովկասում։

Հեռագրեցի Հռոմ նախարարապետ Նիտտիին և Ամերիկա Վիլսոնին, վերջինից խնդրելով իր հզոր միջամտությունը դաշնակիցների առաջ և իր օգնությունը հանուն Ամերիկայի։ Եղա ամերիկական պատվիրակության մոտ։ Երկար ատեն տեսակցեցի մեր գործերով զբաղվող պ. Bukles-ի հետ։ Նրանք էլ ունին բազմաթիվ հեռագրեր, հաստատեցին իմ հայտնածը։ Իմացա, վոր իրենք չափազանց հուզված են և իրենց կողմից դիմել են հեռագրով Վիլսոնին շուտափույթ օգնություն խնդրելով։ Անցա անգլիական կառավարությունը։ Տեսակցեցի մեր գործերի բաժինը վարող Վանզիտարի հետ (Vansitare), վոր հայտնեց, նույնպես թե իրենք իրազեկ են, թե այս բոլորն Ադրբեջանի գործն է և թուրքերի և թե տարաբախտաբար իր ճիգերն անգլիական զորքերը պահելու Կովկասում մեացին ապարդյուն, այլ միայն հաջողվեց հեռագրել անգլիական բարձր հրամանատարության, վոր եթե հնար է զենք եվ ռազմամթերք տան հայերին։

Գեթ այս չնչին օգնությունը կհասնի մեզ թե չե չգիտեմ։ Միաժամանակ Վանզիտարը խորհուրդ տվեց նոր դիմումն անել նաև Բալֆուրին, վոր

այստեղ ե. այս նամակս շտապում եմ հասցնել մեր սուրհանդակին և վազում եմ Բալֆուրին։ Պիտի տեսնեմ նաև Պիշոնին, Կլեմանսոին։ Թշվառութիւնն այն է, իմ սիրելի Ալեքսանդր Իվանիչ, վոր այս կոնֆերենցիան ինչպես գրեցի պաշտոնական զեկուցյիս մեջ փոխադարձ շահերի ամենավատ տեսակի իմպերիալիստական ձգտումների բախումների շնորհիվ միանգամայն պարադիտիկ վիճակի մեջ ե. ամեն տեղ ստեղծեց հրգեհ, առանց հնար ունենալու մարել կրակը։ Մենք ինչպես միշտ առաջին զոհերն ենք։ Ինչ էլ լինի դադար չպիտի առնեմ, կանեմ անկարելին, հուսահատականը — կհաջողեմ արդեոք...։

Այս բոլորն ինձ այնպես շփոթեց, վոր ես անկարող եղա ցարդ մեր ներքին խնդիրների մասին քեզ գրել ու գրելու շատ բան կա։ Կփորձեմ այս տեղ ասել միայն այն, ինչ պաշտոնական զեկուցյիս մեջ փափկանկատաուսներով լռում եմ, խնդրում եմ սակայն գրածներս այստեղ նկատեք, Պապաջանեանից բացի մեր բոլոր ընկերների և գործակիցների վճռական կարծիքն ու համոզումը։

Նախ ասեմ, վոր այն պայմանները, վորոնց մեջ եղավ 28 մայիսի ակտը, մեզ չգոհացրեց, այդպիսի ակտն իր իսկական արժեքն ու ազդեցութիւնը պահելու համար պետք ունի երկու անհրաժեշտ պայմանների. 1) նա պիտի լինի պարլամենտի միաձայնութեամբ կամ ճնշող մեծամասնութեամբ, և վոչ թե կառավարութեան հայտարարութեամբ, անգամ եթե այդ կառավարութիւնն օժտված ե օրենսդրական իրավունքներով, 2) բոլոր կուսակցութիւնների միակամ և սերտ համաձայնութեամբ։ Այս երկու պայմաններն անհրաժեշտ եին մանավանդ այժմ, երբ մեր միութեան դեմ այնքան խոչընդոտներ կան ներսից և դրսից, հետո այդ 12 թիւրքահայերի պարլամենտ ընդունելը ինչ բարոյական արժեք կարող եր ունենալ, քանի վոր նրանց գործադիր մարմինն անցեալ փետրվարի մեջ բուլղարացի Գրիգորի ստորագրութեամբ այստեղ փաշային պաշտոնագիր եր ուղղում անվանելով նրան Հայաստանի վսեմաշուք վարչապետ, և միաժամանակ ուղարկում ե այստեղ իր ներկայացուցիչը՝ Դոկտոր Բոնապարտեանին, վոր մի թշվառ վոչնչութիւն ե և սակայն կարող ե աղմուկ հանել, քանի, վոր խաղալիք ե փաշայի և իր արբանեակների ձեռքին՝ վարկաբեկելու համար մայիս 28-ի ակտը։ Առհասարակ այդ արևմտահայ խորհրդի վարիչները և ամբողջ նրանց կոնֆերենցիան բազմաթիվ սխալներ եր արել և շատ ե հակված եղել դեպի փաշան թե իր վորոտումներով և թե մանավանդ իր փետրվարի դիմումով, վորպեսզի նրանց ներկայացուցիչների պարլամենտ մուտքը վորևե արժեք ունենան։ Եվ այնքան տղայամիտ են եղել, վոր առանց պաշտոնական հայտարարութեան այստեղից նրանք հավատացել են, վոր փաշան այստեղ կառավարութիւն ունի և նրան դիմում են իբրև «վսեմափայլ վարչապետի»։

C'est por trop ridicule:

Հետո, վոչ մի ջանք խնայելու չեր, վոր մայիս 28-ի ակտը պատրվակ բռնած ժողովրդական կուսակցութեան անդամները չձգեին կառավարութիւնը և մամուլի մեջ չբացվեր այդ անպատիվ արշավն այդքան մեծ գաղափարի շուրջը։ Գիտեմ այդ բոլորը նրանց համար պատրվակ և, քանի վոր քո նամակից իմանում ենք նրանց բազմաթիւ marchandage-ները, բայց այդ պատրվակը այսքան պատմական ազգային ակտի առթիւ նրանց տալու չեր, իմանալով մանավանդ, թե վորքան թույլ և այդ պարոնների պատասխանատվութեան զգացումը։ Ինչ և ե փաստը կատարված ե, մենք այստեղ ի հարկե Պապաջանեանից բացի, վորի մասին հետո կգրեմ, վոչ միայն մեզ թույլ չենք տվել քննադատել այդ ակտի վորևե թույլ կողմը, այլ հայտարարել ենք, վոր դա իրավական ե։ Վոր քննադատութիւնները քեզ և ընկերներին գրում եմ confidenciel եղանակով։ Պաշտոնական գրով հաղորդեցի, թե փաշան և իր շուրջը հավաքված պնակալեզները ինչ վայնասուն բարձրացրին, արտակարգ ճիգեր ենք թափել հս և Համոն մի փոքր զսպելու համար դրանց ազգադավ հիմարական արտահայտութիւնները։ Հեռագիրը, վոր ձեզ տվինք խնդրելով հետաձգել 28-ի ակտի վավերացումը, արդիւնք ե մեր այդ աշխատանքի. ուրիշ ելք չկար։ Տարաբախտաբար փաշան մեծ մասամբ մեր անհեռատեսութեան շնորհիվ, մեր թերթերի, մեր ընկերների պրոպագանդայով թիւրքահայերի բավական ստվար մեծամասնութեան մեջ (կարծում եմ և կովկասահայերի) դարձել ե մի տեսակ կուռք։ Եվ նա ընդունակ եր անագին աղմուկ հանելու, կանգ չառնելով վոչ մի միջոցի առաջ։ Երբ նա զգում ե, վոր իշխանութիւնը ձեռքից գնում ե, ընդունակ ե ամենավատ արարքների, մինչև հանցանք։ Ահա թե ինչու միակ ելքը, մենք նկատում ենք, այս դրութիւնից դուրս գալու համաձայնութեան մեջ ե այս շատ վտանգավոր ծերունու հետ. տեսնում եք Ամերիկայից նույնն են հեռագրում բարեկամները։ Եվ մենք շատ ուրախ կլինենք, հակառակ վոր մենք չկարողացանք այստեղ համաձայնութեան գալ, եթե շուտով փաշայի միտքն մեկնի Երևան և դուք կարողանաք այնտեղ մի modus vivendi գտնել մեր ազգն երկի չբաժանելու համար։ Նորից կրկնեմ մենք դեմ չենք լինի համաձայնութեան պահուն փաշան թողնել միակ նախագահ, բայց նրա մոտ մեծամասնութիւնը պիտի լինի մեր մարդկանցից (թող նույնիսկ վոչ կուսակցական) կամ պարկեշտ, ազնիւ, չեզոք մարդիկ, ինչպես Հովհաննես Խան-Մասեհեան, վոր իր քաղաքագիտական հմտութեամբ և տակտով ամբողջ ղլխով բարձր ե փաշայից։ Հետո, եթե դուք պիտի կամենաք, վոր ես ճնամ փաշայի հետ գործելու, ես չեմ խուսափի, բայց պայմանով, վոր նա չհամարձակվի առանց ինձ դաղտնի քայլեր ու տեսակցութիւններ անել, վորովհետև կրկնում եմ անընդունակ մարդ ե և հեշտութեամբ gafe-ներ ե անում, վոչ մի պայմանով ընդունելու չե, վոր փաշան վորևե նախարարական պաշտոն ունենա Փարիզ նստած։ Հետո, նրան շրջապատող երեք արբանեակները

Թեքեևան, մանավանդ Զոպանեան և վերջապես պրոֆեսոր Տեր-Հակոբեան, վոր «Համլետի» մեջ Պոլոնիասի տիպն է նոր պատվիրակութեան մեջ լինելու եին կամ թողնելու և վորպես անխուսափելի չարիք կամ Թեքեևանին կամ Հակոբեանին, Զոպանեանը արժանի չե վորևե պատվավոր տուն մտնելու, ուր մնաց թե պատվիրակութեան։ Եթե այդ միտքան մեկնելու լինի, մենք կգրենք Ձեզ պատվիրակութեան ցանկալի կանդիտատների անունը. ես այժմ բավականանում եմ այսքանով։

Մ. Պապաջանեանը Պոլսից ի վեր ըստ իս ավելի ևս գլուխը կոցրել է, նա այլևս իր մտածումների դեկը կորցրել է և նույնիսկ մեզնից դուրս անձանց ապշութիւն է պատճառում։ Ես վերատին կրկնում եմ, ինչ ասել եմ առաջ հենց քեզ, վոր նա մի հիվանդ մարդ է, վոր շտապով պետք է որևե մի խաղաղ անկիւն գնա հանգստանալու և համենայն դեպս միանգամ ընդմիշտ պիտի վազ գա ազգային հասարակական գործերից։ Ամենամեծ սխալն եղավ նրան երկրորդ անգամ պատվիրակութեան մեջ առնելը, ես դրանում մասամբ ինքս եմ մեղավոր։ Ինչ և լինի նա նոր պատվիրակութեան մեջ միանգամայն անոգուտ, հաճախ վնասակար է լինելու։ Առայժմ ըստ իս ամենավատ և անարժան դերի մեջ է։ Լինելով կառավարութեան ներկայացուցիչ մեր պատվիրակութեան մեջ, ապրելով պետական հաշվով, նա միաժամանակ ամենայն անբարեխղճութեամբ, վոր հասնում է ցինիզմի, այդ կառավարութեան առակն է փորում՝ վարկաբեկելով ամեն տեղ և ամենքի մոտ։ Մասնավորապես իր կուսակցութեան հեռանալը պատրվակ բռնած՝ նա ամբողջ օրն անցնում է ամենավատ տեսակի պրոպագանդայով մեր կառավարութեան դեմ։ Նա չքաշվեց հայտարարել փաշայի ժողովրդականների առաջ, թե մայիս 28-ի ակտը ç est un çoupd'etat։ Առաջին անգամն է երևի աշխարհում այսպիսի մի ներկայացուցիչ մի կառավարութեան, վոր իրեն նպատակ է դրել իր իսկ կառավարութիւնն և նրա գործողութիւնները վարկաբեկել մնալով միշտ պետական պաշտոնեա։ Ըստ իս սա արդեն մի անարժան ընթացք է։ Հավատացած եմ սակայն, վոր Պապաջանեանին դժվար է հակառակը համոզել, և մենք չենք փորձում այդ անել, խույս ենք տալիս վեճերից, մի նոր փորձանք չպատրաստելու գլխներիս։ Կրկնում եմ սա հիվանդ մարդ է, վոր պետք է թողնի հասարակական և քաղաքական կեանքի ասպարեզը։

Մեր ժողովրդի ահռելի տրագեդիայի առաջ գրիչս չի զորում ավելի ըղբաղվել այս կարգի տխրեցուցիչ ու մանր հարցերով, ինձ տարաբախտաբար այս մարդիկ՝ փաշան, Պապաջանեանը դադար չեն տալիս գեթ անելու համար այն ինչ անհրաժեշտ է ու հնարավոր, վեճեր, վեճեր....

Համեն ուզում է վերադառնալ, ես էլ հավատացած եմ, վոր նա այդտեղ Երևանում շատ հարկավոր է մեր կուսակցական կեանքի դեկը ձեռքում պահելու համար։ Բայց առ այժմ արգելք եղա, վորովհետև չեի կամենա

մենակ լինել պատասխանատու։ Բայց հետո մեկին կարելի լիներ հեռագրով կարգել նրա փոխարեն, ընդեմ չեի լինի, որ Համոն վերադառնար։

Միրելի Ալեքսանդր Իվանիչ, ասա ընկերներին, նաև մեր թերթերի վարիչներին, որ առայժմ գոնե պատճառներ չտան այդտեղի օտար ներկայացուցիչներին գրել իրենց կառավարութիւններին, թե դաշնակցականները բայշևիկներ են, այսպիսի մի զեկույց կարդացին ինձ։ Խնդրում եմ նկատի առնել, որ ոչինչ մեզ այնպես չի վնասի, որքան բայշևիկ կամ ծայրահեղ լինելու հռչակը։ Տարաբախտաբար ինչպես տեսնում եք, հեղափոխական դեմոկրատիան Արևմուտքում տակավին դրութեան լիակատար տերը չե և այս բուրժուական կոնֆերենցիան դեռ իր խոսքն է ասում մանավանդ մեզնման թույլ ազգերի համար։ Միւս կողմից փաշային շրջապատող պնակալեզներն և ինքը փաշան պատրվակներ են փնտրում մեզ բայշևիկ հռչակելու օտարների աչքում։ Ալեքսանդրապոլում ինչ թերթ ունինք նրա մասին ենք գրել և «Աշխատավորի», Ջերմբարևները քեզ և տիկնոջը։

Քո՝ Ա. Ահարոնեան

IV.

Փարիզ, 17 սեպտ 1919 թ.

Հայաստանի հանրապետութեան Արտաքին Գործոց նախարար մեծարգո պարոն Ալ. Խատիսեանին

Մեր կառավարութեան հակառակորդներն օտար և մանավանդ հայ՝ ամեն կողմ տարածում են ամենաստոյգ և ամենավտանգավոր զրույցներ մեր հանրապետութեան մասին աշխատելով ցույց տալ նրա վարիչներին, որպես բայշևիկներ, քանդողներ, ծայրահեղներ և այլն։ Այս կարգի պրոպագանդան սկսվեց ժողովրդական կուսակցութեան մեր կառավարութիւնը թողնելուց ի վեր։ Պատվիրակութիւնս պարտք է համարում այս պարագայի վրա հրավիրել Ձեր լուրջ ուշադրութիւնը և կարծում է, որ լավ տպավորութիւն կթողնի արտասահմանում և վերջ կտա այս թշնամական զրույցներին ժողովրդական կուսակցութեան հետ մեր կառավարութեան համաձայնութիւնը։ Դա անհրաժեշտ է շուտափոյթ իրագործել. հապաղումը մեր գործերի վրա անդրադառնում և հիվանդագին ձևով։

Հայաստանի Հանրապետութեան
Պատվիրակութեան նախագահ՝ Ա. Ահարոնեան

[584.]

A II / 57265

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220057265